

ՀԱՍՏ ՀՅՈՒՅՆԿՈՄԱՑ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԵԱԽԱԲՈՒԹՅԱԿԱՆ ՓՈՐՁԱԿԱԶՄԸ

ԽՐԱՔԻԹ-ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ—ԳՐՔՈՒՅՑ Ա 1

ՍԻՄՈՆՈՎ, Ս. Ն.

Ա. ԲԵՎԻԼՅԱՆ ԳԱԼԵԳԱՅԻ

(ԱՅՏՈՒԿԻ)

ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ

633.2
Ա-50

ԳՅՈՒՂՋԱՑ

1936

ՅԵՐԵՎԱՆ

15.918

Հ 4 Տ Ե Ա

33.2

50 ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈԼԵԳԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ
ԿԵՐԱԲՈՒՅՅՈ Ե

1932 թվականին կերերի Համամիութեան Գիտահետազոտական Խնստիտուտի և Բուսաբանական Խնստիտուտի եքսպեդիցիաների մասնակիցները հյուսիսային կովկասի, Դաղստանի, Հայաստանի և Վրաստանի լեռների շրջակալքում հավաքեցին նոր կերաբույսի՝ արևելյան գալեգայի (այժուկի-ԿՕԶ-ԱՅԹԻԿ) սերմեր։ Վաղորոք կատարված վոչ շատ մեծ փորձնական ցանքերի հիման վրա ուղղվուսից հավաքված սերմերը ցանվեցին Մոսկվայի մարզի պարմաններում (կերերի Խնստիտուտի փորձնական տնտեսության մեջ՝ Մոսկվայի մոտ)։

Հետևելով արևելյան գալեգայի զարգացմանը, հաջողվեց պարզել, վոր այդ բույսի ունի գյուղատնտեսության համար սպառակար մի շարք հատկություններ և դրանք ընկնում մյուս ընդարձակ խո-

ՀԱԽ-ССР

գան բազմամյա բույս ե: Միևնույն վայրում (հողամասում) կարող ե տալ տնտեսականորեն արժեքավոր բերք 8-10 և ավելի տարիների ընթացքում: Արևելյան գալեգան ցրտադիմացկուն ե, չի փոռում, հիվանդություններին դիմանում ե և վնասատուներից չի տուժում:

Կերերի ինստիտուտի փորձնական տնտեսությունում ցանելու տարին մի հեկտարից ստացվեց հետեւալ բերքը՝ հում կանչչ մասա—68 ցենտներ, խոռ 20 ցենտներ: Ցանքի լերկորդ տարին յերկու քաղից ստացվեց՝ հում կանչչ մասսա—177 ցենտներ, խոռ—57 ցենտներ:

Արևելյան գալեգայի ամենազնահատելի հատկությունը նրա վաղ գարնանն աճելու ընդունակությունն եւ Այդ հանդամանքը խոշոր նշանակություն ունի. դրա շնորհիվ հնարավոր ե լինում գալեգան ոգտագործել վորպես լրացուցիչ կանչչ կեր հենց այն ժամանակ, յերբ կոլտնտեսությունն արատային կերի պակասություն ե զգում:

Արևելյան գալեգայի կանչչ մասսան հաջողությամբ կարելի յե ոգտագործել նաև վորպես հումույթ՝ վաղ գարնանային և ուշ աշնանային սիլոս պլատրաստելու համար: Վերջապես գալեգան տալիս ե բարձրորակ խոտ, վորը լուր մննդանյութերի պարունակությամբ և մարսելիությամբ հավասարվում ե այնպիսի առաջնակարգ խոտաբույսերի, ինչպիսիք են յերեքնուկը և առվուրելը:

Սակայն, այդ արժեքավոր կուլտուրայի տարածումն արգելակվում ե սերմերի բացակայության պատճառով: Ներկայումս արևելյան գալեգայի միակ ազրյուրը հանդիսանում են նրա վայրի աճող թփուտները չյուսիսային կովկասում, Դաղստանում, Հայաստանում և Վրաստանում:

ԳԱԼԵԳԱՅԻ ԲՓՈՒՏՆԵՐԻ ԱՃՄԱՆ ՎԱՅՐԵՐԸ

Բնական պայմաններում գալեգան հանդիպում ե առավելապես լուսների լանջերին: Տուփի մակերեսութից 1200 մետրից վոչ բարձր, հումուսով հարուստ անտառային

հողերում—նոսրացած անտառներում, ծառաթփուտներում և անտառային բացատներում:

Պարզ կողմնորոշվելու համար ցույց տանք Հայաստանում վայրի գալեգայի արդեն հայտնի թփուտների աճմտն վայրերը:

Ստեփանավանի շրջանի Գյուղաքարակ գյուղի մոտ—10 հեկտար, լոռու անամն. տոհմ. խորհուտնեսության շրջակալքում—12 հեկտ., ձիաբուծարանի № 72 արոտամասում 10 հեկտ., Կիրովականի շրջանում՝ Կիրովականի վորձնական անտառամասում—8 հեկտար:

Այս ցուցակով բնականաբար չեն ոպառվում արևելյան գալեգայի վայրի աճող թփուտների վայրերը և տարածությունը: Արևելյան գալեգայի կուլտուրայի հաջողութեամբ տարածեն ամբողջապես կախված են նրա նոր թփուտների հետագա հայտաբերման, նրա սերմերը հավաքելու և կուլտուրական, լավ մշակված հողերում բարձացնելու աշխատանքից:

ԻՆՉՊԵՍ ՃԱՆԱՋԵԼ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳԱԼԵԳԱՆ ՅԵՎ ՏԱՐԲԵՐԵԼ ՄՅՈՒՄ ԲՈՒՅԱԵՐԻՑ

Արևելյան գալեգան պատկանում է ընդագուրների ընտանիքին, այսինքն՝ այն ընդանիքին, վորին պատկանում է յերեքնուկը, առվլուտը, վիկը, կորնգանը և այլն: Արևելյան գալեգան ունի յերկար, լուսափայլ արմատներ, վորոնք թափանցում են հողի ներքին շերտերը 60—80 սմ խորությամբ: Դիմավոր արմատի կողքի ճյուղավորումների վրա աճում են բազմաթիվ (240—300 հատ) և տարբեր մեծությամբ ու ձևի պալարներ, վորոնց մեջ կան մանրագույն ելակներ—բակտերիաներ (մանրեներ), վորոնք ընդունակ են ողից լուրացնել ազուր և նրանով հարսացնել հողը:

Արևելյան գալեգայի ցողունն ուղականգուն ե, ունի վայրատականաչ գույն: Ցողունի վողջ ուղղությամբ անցնում են հարթ, վոչ խոր ակոսներ:

Գալեգայի միջին բարձրությունը, բնա-

կան պայմաններում, հասնում ե 125—140
սանտիմետրի:

Առանձին բույսերի բարձրությունը
հասնում ե մինչև 2 մետրի: Գալեգայի ցո-
ղունի վրա լինում ե 8—9 հիմնական
տերև:

Տերևները բարդ են, անզուգափետ-
քային, վորոնց յերկարությունը 14-ից
մինչև 26 սանտիմետր ե: Յուրաքանչյուր
տերև բաղկացած ե 9-ից 15 տերևիկներից:
Յողունի ներքեմ մասում գտնվող տերևիկ-
ները ձգաձև են, իսկ վերևի մասում գտնշ-
վողները՝ յերկարավուն-ձգաձև: Տերևիկների
յերկարությունը հասնում ե 4—8 սանտի-
մետրի, լայնությունը՝ 2,5 սմ, տերևների
գույնը՝ ներքեմ մասում դեղնավուն-կանաչ
ե, վերևում՝ մուգ կանաչ: Տերևների յերա-
կավորումը ցանցաձև ներփային ե:

Տերևների լեզերքները պատված են
թարթանման մազմղուկներով: Վերին տե-
րևիկը վերջանում է $1/2$ —1 մմ յերկարու-
թյամբ փոքրիկ փշիկով: Հիմնական տերևնե-

րի գլխավոր միջին յերակները պատված են
մանրիկ մազիկներով, վորոնք առանձնա-
պես խիտ են և ուժեղ՝ տերևկիկների ամրաց-
ման տեղում: Տերևները ցողունին ամրա-
նում են կոթիկների ոգնությամբ: Յողունի
ներքեմ մասում տեղափորված տերևների
կոթի յերկարությունը հասնում ե 3—16
սանտիմետրի: Յողունի վերևի մասում տե-
ղափորված տերևների կոթիկների յերկարու-
թյունը հասնում ե 1-ից մինչև 6 սանտի-
մետրի:

Յուրաքանչյուր բույսի վրա տեղափոր-
ված են 3—4 ուղղանիստ ծաղկեփունջներ:
Նրանցից յուրաքանչյուրն ունի 50—55 ծաղ-
կիկ: Սրբելյան գալեգայի ծաղիկները կա-
պուլտ են՝ մանիչակագուն լերանգով: Նրանք
նստած են կարճիկ ծաղկափոտիկների վրա:

Գալեգայի պտուղը զծալին ե, թեթև
կերպով ծոված, ծալրը բզածե սուր ե: Ուն-
դի յերկարությունը 3—4 սմ, լայնությունը՝
2,5—3 միլիմետր: Ունդի մակերեսը հարթ
ե կամ թեթեակի ալիքավուն ուժեղ արտա-
հայոված յերակավորմամբ: Գալեգայի ուն-

դի (պատիճի) մեջ գտնվում ե Յ-ից մինչև
Դ-ը սերմ: Իրենց ձեռվ նրանք նման են
առվուլտի սերմերին, բայց վերջիններից մի
քանի անգամ մեծ են, Գալեգալի սերմերը
դեղնագուն են:

ԽԶՊԵՍ ՏԱՐԲԵՐԵԼ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳԱԼԵԳԱՆ ԴԵՂԱՏՈՒ ԳԱԼԵԳԱՅՑԻՑ

Արևելյան գալեգալից բացի գոյություն
ունի բուսաբանական մեկ ուրիշ այլատեսակ՝
դեղատու գալեգան: Դեղատու գալեգալի
հիմնական տարրերություններն արևելյան
գալեգալից սրանք են:

Արեվելյան գոյնզայի
նշանները

Տերեներն ովալ—ձվո-
ակ են:
Հողի մեջ յեղած մասեմ
առաջանում ե վերաբմատ:

Մաղիկները կտղույտ
են մանիշակագույն յե-
րանդագի:

Դեղատու գալեգալի
նշանները

Տերեներն ունեն ավելի
յերկարագուն ձե:
Վերաբմատ չեա, ար-
տան առանցքային և հո-
թափոր, շաղկամաձե, խոր
մանուժ և հողի մեջ:

Մաղիկները գունատ մա-
նիշակագույն են. դոյս-
թյուն ունեն նրանց այ-
լտեսակները՝ սպիտակ և
դարդագույն ժաղիկներով:

Դեղատու գալեգան, վորպես կերային
բույս, նույնպես արժանի յե խոշոր ուշադ-
րության, և նրա սերմերը նույնպես պետք ե
հավաքել: Սակայն հարկավոր ե ի նկատի ունե-
նալ, վոր չի կարելի արևելյան գալեգալի և
գեղատու գալեգալի սերմերն իրար հետ խառ-
նել: Յերկու տարրեր տեսակի գալեգանների
ունդերը (պատիճները) և սերմերն ար-
տաքին տեսքով միատեսակ են և տարրե-
րել չի կարելի:

Դրա համար ել անհրաժեշտ ե արևելյան
և դեղատու գալեգանների սերմերն առանձին
հավաքել և առանձին ել պահել:

ԳԱԼԵԳԱՅՑԻ ՍԵՐՄԵՐԻ ՀԱՎԱՔԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԵ

Գալեգալի սերմերի հասունացման ճիշտ
վորոշումը հավաքելու համար ունի խոշոր,
գործնական նշանակություն:

Գալեգալի չհասունացած ժամանակ հա-
վաքված սերմերը վորպես կանոն լինում են
նվազ և ունեն ցածր ծլունակություն: Ժա-
մանակին չհավաքված սերմանոցներում սեր-
մարդագույն ժաղիկներով:

մերի ուժեղ թափվելու հետևանքով կորուստ-
ներ են լինում:

Գալեգայի սերմերի հավաքման համար
ճշգրիտ ժամկետներ ցույց տալ հնարավոր
չե, վորովհետև նրանք մեծ չափով կախված
են տվյալ տարրա ողերեվութաբանական
պայմաններից: Յերաշտ տարիներին գալե-
գայի սերմերը հասունանում են ավելի վաղ,
քան այն տարիներին, յերբ մթնոլորտային
տեղումները (անձրևները) լինում են բավա-
կանաչափ, կամ անգամ առատ:

Գալեգայի սերմի հավաքելու համար
հասունացած լինելը կարելի յե վորոշել նրա
ունփի (պատիճի) գույնով: Հենց վոր սեր-
մերը հասունանում են, ունդի փեղկերը
դառնում են մուգ-դարչնագույն: Բայց գալե-
գայի սերմերը հասունանում են անհավա-
սարաչափ, ուստի հասած սերմերի թափե-
լուց խուսափելու համար չպետք ե սպասել,
մինչև վոր բոլոր ունդերի փեղկերը դառնան
մուգ-դարչնագույն:

Սերմերը կարելի յե սկսել հավաքել այն

ժամանակ, յերբ ունդերի $40-50^{\circ}/\text{o}$ -ի փեղ-
կերը մուգ-դարչնագույն են, $30-35^{\circ}/\text{o}$ -ը՝
բաց դարչնագույն, $15-30^{\circ}/\text{o}$ լ՝ կանաչա-
վուն-դարչնագույն:

ԳԱԼԵԳԱՅԻ ՍԵՐՄԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ, ՄՇԱԿՈՒՄԸ ՅԵՎ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Նկատի ունենալով, վոր մյուս խոտա-
բույսերի հավաքատեղում գալեգան աճում
է միայնակ փնջերով, կամ վոչ շատ մեծ
ածուներով ($20-50$ քառ. մետրի չափ),
նրա սերմերի հավաքը պետք ե կատարել
ձեռքով, բույսի փնջերից ունդերը պոկելու
միջոցով: Գալեգայի ունդերը կարելի յե կալ-
սել հացահատիկային կուտուրաների համար
գործածվող վոչ շատ մեծ ձեռքի կալսիչով,
իսկ յեթե քանակազես քիչ ե՝ ձեռքով:

Կալսելուց առաջ ունդերը (պատիճները)
անհրաժեշտ ե լավ չորացնել:
Գալեգայի սերմերը կարելի յե պահել
առանց կալսելու—ունդերով:

Գալեգայի սերմերը հավաքելուց հետո

պետք եւ ուղարկել փորձակալանին հետեւալ
հասցեյով.

Յերեան, Նալբանդյան փողոց թ 50,
Հողժողկոմատ, Հանրապետական Անասնա-
քուծական փորձակալան, Կոլտնտ. փորձարկ-
ման բաժին:

Սերմերը կարելի յեւ ուղարկել կալսված,
ինչպես և առանց կալսելու—ունդերով (պա-
տիճներով):

Դալեգայի կալսված մաքուր սերմի 1
կիլոգրամը գնահատվում է 10 ռուբլի,
առանց կալսելու՝ ունդերով—արժե 4 ռուբլի:
Պարկի կներում սերմերի հետ միասին պետք
ե անպայման դնել նաև լրացված անկետան
(վոր կցվում եւ վորպես հավելված) և ան-
պայման ճշտութիւմը ցույց տալ սեփական
հասցեն, վորպեսզի դրամական արժեքը հնա-
բավոր լինի ուղարկել:

Միաժամանակ գալեգայի հավաքված
սերմերը կարելի յեւ ոգտագործել կոլտնտե-
սության մեջ փորձնական ցանք կատարելու
համար: Իսկ թե ինչպիսի փորձեր կարելի

յե դնել գտլեգայի վրա և, ինչպես պետք ե
կատարել այդ փորձերը, այդ մասին փոր-
ձակայանը հասուլ հրահանգ կուղարկի այն
ժամանակ, յերբ ձեզանից կստանա հար-
ցումներ:

Կոլտնտեսության փորձադաշտում ցան-
քող գալեգայի սերմերի նմուշները նույնպես
պետք եւ ուղարկել փորձակայանին՝ կցված-
անկետայի հետ միասին:


ԽՐՁԻԹ-ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՈՒԾԱԴՐՈՒԹՅԱՆ.

Հանրապետական Անտառնաբուծության
փորձակայանը խրճիթ-լաբորատորիաներին
մեթոդական գործնական խորհուրդներով,
անասնաբուծության և կերահայթայթման
հարցերի վերաբերյալ ցուցմունքներով ողջ
նելու նպատակով Գյուղհատի հետ կազմում
և լույս և ընդայում մատչելի գրքույկներ:

Գրքույկները մեծ մասամբ ունենալու
յին հրահանգների բնույթ, վորոնց մեջ լուս-
սաբանվելու յին փորձեր կատարելու նպա-
տակը, փորձերի կազմակերպման տեխնիկան
և հետազոտական գիտողությունների հաշ-
վառման ձևերը:

Յեթե կլինեն կոլտնտեսություններ և
խրճիթ-լաբորատորիաներ, վորոնք ցանկու-
թուն կունենան անասնապահության և կե-
րահայթման հարցերի շուրջը նոր փոր-
ձեր դնել և այդ ուղղությամբ հետազոտու-
թյուններ կատարել, խնդրում ենք այդ մտ-
սին հայտնել փորձակայանի կոլտնտեսա-
կան-փորձարկման բաժնին, անհրաժեշտ մե-
թոդական ցուցմունքներ ստանալու համար:

Մեր հասցեն՝ Երեան, Հողմուկամատ, Նալ-
բանդյան № 50 հաստակեան Անտառնաբուծության
փորձական համարական փորձարկման բաժին:



ՀՅԱՀ-ՀՀՀ

Ամբողիք՝ Ս. Իսահակյան, Նշ. Մալթյան
Քարգմ. Ս. Ավետիսյան

Ալբանիական պատճեն
Գլուխութիւն Խ. 1095
Հրատ. ՏՊ
Տիրած 1500

Վագիկ և Տիգրան Առաքելյան
Տառապը և ապագան 577

Հանձնված և արտադրության 22/VIII 1936 թ.
Սահմանադրության 5/IX 1936 թ.

Կառավարության նախագյուղական գործ. թ. 14, 64 էլեկտ.

«Ազգային գրադարան»



NL0287604

20 կոմ.

625

18. 918



С. Н. СИМОНОВ

Опыты по агротехнике
галеги восточной

Сельхозгиз

1956

Продажа